ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի լուծման մասին

ք. Երևան «15» 08 2025թ.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, ի դեմս Երևանի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Վ. Արտաշեսյանի, որը գործում է ՓԲԸ կողմից 30.12.2024թ. տրված թիվ 01/15.2/5679-2024 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ Մատակարար մի կողմից, և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, այսուհետ՝ Բաժանորդ, մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ լուծում են իրենց միջև կնքված 07.07.2013թ. թիվ 012.08.13.00032 Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ կազմակերպություն)) պայմանագիրը՝ հիմք ընդունելով պայմանագրերի 10 կետի 30) ենթակետի պահանջները:
2. Կողմերը փաստում են, որ իրենց միջև կնքված վերոնշյալ մատակարարման պայմանագրով նախատեսված պարտավորություններով միմյանց նկատմամբ որևէ պահանջ չունեն:
3. Կողմերը պայմանագրի լուծման օր են համարում սույն համաձայնագրի կնքման օրը:
4. Սույն համաձայնագրով չլուծված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
5. Սույն համաձայնագիրը կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
6. Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՄԱՏԱԿԱՐԱՐ՝	ԲԱԺԱՆՈՐԴ՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, Երևանի ԳԳՄ Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 141/3	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սարյան 22
տնօրեն ----------Վ. Արտաշեսյան	Գլխ. քարտուղար ----------Ա. Սաֆարյան